ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 22-Ա « 04 » հունվարի 2024 թ.

ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ
ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ
ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Երևանի քաղաքապետարանի կողմից 07.12.2023 թվականին հայտարարված ԵՔ-ԳՀԾՁԲ-24/28 ծածկագրով Երևան քաղաքի Էրեբունի վարչական շրջանի վարչական շենքի վերելակի սպասարկման ծառայությունների ձեռքբերման ընթացակարգին հայտ ներկայացրած «Վերելակ սերվիս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Մասնակից) ճանաչվել է ընթացակարգի ընտրված մասնակից: Մասնակցին 19.12.2023 թվականին համակարգի միջոցով ներկայացվել էր ԵՔ-ԳՀԾՁԲ-24/28 ծածկագրով պայմանագիր կնքելու, պայմանագրի և որակավորման ապահովումներ ներկայացնելու առաջարկ, սակայն հրավերով սահմանված ժամկետում՝ ծանուցումը և պայմանագրի նախագիծը ստանալուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև 26.12.2023 թվականը ներառյալ, Մասնակցի կողմից չի ներկայացվել հաստատված պայմանագիրը և ապահովումները, պայմանագիրը և ապահովումները ներկայացվել են 27.12.2023 թվականին:

Վերոգրյալով պայմանավորված՝ Մասնակիցը «Գնումների մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, գնահատող հանձնաժողովի որոշմամբ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:

Գնահատող հանձնաժողովը գնման ընթացակարգը հայտարարել է չկայացած՝ համաձայն Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի:

Ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարությունը 29.12.2023 թվականին հրապարակվել է տեղեկագրում:

Ղեկավարվելով Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի բ. ենթակետով և նույն հոդվածի 2-րդ մասով.

1. «Վերելակ սերվիս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

2. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի գնումների վարչության պետի վրա:

3.Սույն որոշման կատարման հսկողությունն իրականացնում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

X

ԱՐՄԵՆ ՓԱՄԲՈՒԽՉՅԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Signed by: PAMBUKHCHYAN ARMEN 3611840246

ԱՐՄԵՆ ՓԱՄԲՈՒԽՉՅԱՆ